

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԱՆԱ ՄԻՆԱՅԻԼԻ

**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի գիտական խորհրդում:

- Գիտական ղեկավար՝** Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ս. Մանուկյան**
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝** Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. Կարապետյան**
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լ.Պ. Զարոյան**
- Առաջատար կազմակերպություն՝** Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հոկտեմբերի 31-ին, ժամը 14.00-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՅ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, Երևան, Խ. Աբովյան, 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2014թ. սեպտեմբերի 30-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա.Փ.ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Հասարակության քաղաքակիրթ լինելու մակարդակը, պետության հեղինակությունն այսօր ուղղակիորեն կախված են այդ հասարակությունում ապրող երեխաների ապագայի նկատմամբ գրաված դիրքից: 20-21-րդ դարերի խոշոր սոցիալական փոփոխությունները մեծ ազդեցություն գործեցին ընտանիքի և նրա կողմից իրականացվող դաստիարակչական գործընթացների վրա: Այս իմաստով հասարակության զարգացման արդի փուլում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացներն իրենց խորը կնիքն են դրել ընտանիքում արդյունավետ դաստիարակության՝ որպես անձի ձևավորման ու զարգացման սոցիալական գործոնի վրա:

Սա պահանջում է նոր մոտեցում ընտանիքում արդյունավետ դաստիարակության հարցերի նկատմամբ, ինչը նախ և առաջ ենթադրում է ընտանիքի հիմնախնդիրների, դեռահասի դաստիարակության և զարգացման գործում ընտանիքի դերի վերաիմաստավորում: Ընտանիքը պետք է դիտել որպես դեռահասի անձի ձևավորման ու զարգացման վրա ազդող առաջնային գործոն: Նրա կարևորագույն գործառույթը երեխաների սոցիալականացման ապահովումն է, ընտանիքում արդյունավետ դաստիարակության պայմանների ստեղծումը:

Փոխվել են ընտանիքի անդամների միջանձնային հարաբերությունների ոլորտը, գործառույթները, ինչը հրատապ է դարձնում ընտանիքում արդյունավետ դաստիարակության նոր մոդելների մշակման հիմնախնդիրը:

Ժամանակակից ընտանիքն իր առաքելությունը պետք է տեսնի ոչ միայն երեխաներին գիտելիքներ տալու, այլև բարոյական, մարդասիրական հատկանիշներով օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների, հասարակությանը նպաստ բերող ու գործուն անձերի դաստիարակման մեջ՝ ինչը կարելի է ապահովել միայն ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ստեղծումով:

Ընտանիքում արդյունավետ դաստիարակության կարևոր պայման է ընտանիքի բոլոր անդամների ընդգրկվածությունն ընտանեկան հիմնախնդիրների լուծման գործում, այսինքն՝ ծնողների, նրանց և երեխաների համագործակցությունը, գործունեության համատեղ պլանավորումը, իրականացումը և արդյունքների գնահատումը:

Մանկավարժական հետազոտությունները և կյանքը ցույց են տալիս, որ գնալով բարձրանում է երեխայի անձի ձևավորման ու սոցիալականացման գործընթացի վրա ընտանիքի ներգործության դերը, որն էլ պայմանավորում է ընտանիքում արդյունավետ դաստիարակության և ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը:

Ներընտանեկան փոխհարաբերությունները պատճառ են դառնում ծնողների և երեխաների միջև հուզազգացմունքային ոլորտի անկայունացման, աղքատ

տացման, մինչդեռ դրանք այն կանխորոշող գործոններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի սոցիալականացման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման, ընտանեկան ազգային արժեքների, ավանդույթների, մշակույթի փոխանցման համար: Դրանց իրականացումը հնարավոր է դառնում բացառապես ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ստեղծումով:

Այսօր վերոնշյալ հարցերը բավարար չափով հետազոտված չեն, ու առավել ևս մշակված չեն, ինչը և մեր հետազոտությունը դարձնում է հրատապ և պայմանավորում նրա արդիականությունը:

Չետազոտության նպատակը երեխայի անձի ձևավորման ու զարգացման գործընթացում ընտանիքում արդյունավետ դաստիարակության դերի, հիմնական գործառույթների ուսումնասիրությունն ու այդ դաստիարակության արդյունավետությունն ապահովող համապատասխան պայմանների ստեղծումն է:

Չետազոտության օբյեկտը ընտանիքում արդյունավետ դաստիարակությանը նպաստող պայմանների համակարգն է:

Չետազոտության առարկան ընտանիքում երեխայի արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների իրականացման գործընթացն է:

Չետազոտության գիտական վարկածը այն ենթադրությունն է, որ արդի պայմաններում ընտանիքում երեխայի անձի ձևավորման ու զարգացման գործընթացի վրա ընտանիքի ազդեցությունը կլինի արդյունավետ, եթե ընտանիքում արդյունավետ դաստիարակության համար ստեղծվեն և գործեն մանկավարժական պայմաններ, որոնք նրան կհաղորդեն սոցիալական ուղղվածություն և կնպաստեն անձի ձևավորմանն ու զարգացմանը:

Ելնելով առաջադրված վարկածի ու նպատակի պահանջներից՝ առաջ քաշվեցին հետևյալ **խնդիրները**.

- Վերլուծության ենթարկել երեխայի՝ որպես սոցիալական անձի ձևավորմանն ու զարգացմանը, ընտանիքում արդյունավետ դաստիարակությանը նպաստող մանկավարժական պայմանների վերաբերյալ ժամանակակից հայեցակարգային մոտեցումները:
- Չետազոտել ընտանիքում ծնողների ու երեխաների փոխհարաբերությունների ոճերի ու փոխգործակցության իրական վիճակը և հանգել համապատասխան գործնական եզրակացությունների:
- «Կոլեկտիվ ստեղծագործական գործունեության», «համագործակցային», «ազատ դաստիարակության», «մանկավարժական աջակցության», «բարոյական դաստիարակության» և այլ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցներով բացահայտել ժամանակակից հայ ընտանիքի դաստիարակչական ներուժը, ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները, առանձնացնել համապատասխան գործառույթները, հիմնավորել դրանց դերը ծնող-երեխա հարաբերությունների բարելավման և երեխայի անձի ձևավորման ու զարգացման, ընտանիքում արդյունավետ

դաստիարակության մանկավարժական պայմանների դերի ու ներդաշնակության բարձրացման գործում:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ընտանիքում երեխայի՝

- ձևավորման ու զարգացման վերաբերյալ տեսություններն ու հայեցակարգային դրույթները (Ն.Կ. Հարությունյան [13], Ե.Պ. Սկրիպնիկ [90], Վ.Ս. Սոբկին [94], Վ.Ա. Սուխոմլինսկի [99], Կ.Դ. Ուշինսկի [102], Վ.Մ. Ցելույկո [107], Ջ.Ա. Յանկովա [108]):
- ընտանիքում երեխայի անձի ձևավորման ու զարգացման և սոցիալականացման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները,
- երևույթների միջև համընդհանուր կապի և փոխապայմանավորվածության փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, սոցիոլոգիական մեկնաբանումներն ըստ Ս.Ջ. Արզումանյանի [2], Յու.Բ. Բորևի [3], Ա.Ա. Նալչաջյանի [22], Ա.Ա. Սեդրակյանի [27], Տ.Ֆ. Յարմիցկու [37], Ե.Լ. Վոզնեսենսկայայի [45], Մ.Ն. Գոլդինգերի [49], Ա.Ա. Ռեանի [85] և այլոց, ինչպես նաև զարգացման համակարգվածության և անընդհատության, անձնակողմնորոշիչ մոտեցման դիալեկտիկական սկզբունքները, իմացության գիտական տեսությունը Պ.Յու. Գալպերինի [5], Ա.Ա. Չատինյանի [25], Վ.Ա. Սուխոմլինսկու [32] և այլոց կողմից կիրառմամբ:
- մարդակենտրոնության, անձնային և գործունային դիալեկտիկական արժեքաբանական և համամարդկային մոտեցումները ընտանեկան դաստիարակության հարցերին, տեսականի և գործնականի կապը, մանկավարժական իմացության տրամաբանության ելակետային դրույթները,
- փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության դասականների աշխատությունները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- **Էմպիրիկ հետազոտության և կոնկրետ միջնորդավորված մեթոդներ:** Այդ թվում՝
 - անհատական, խմբային, տեսական, իրավիճակային, ընտրովի, ուղղակի, անուղղակի **դիտում,**
 - **նորմատիվ փաստաթղթերի վերլուծություն,**
 - **անկետավորում,**
 - **երկխոսություն, զրույց, բանավեճ,**
 - **սոցիարցումներ,**
- **Տեսական հետազոտության և մանկավարժական առաջավոր փորձի վերլուծման ու ընդհանրացման մեթոդներ:**
- **Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդներ:**

Հետազոտության արդյունքները վիճակագրական վերլուծության են ենթարկվել համակարգչային փաթեթի Microsoft Excel «Statistica» ծրագրի միջոցով:

Կատարվել է տվյալների որակական (նյութի տարբերակում ըստ խմբերի) ու քանակական մշակում և վերլուծություն (t-test, correlation):

Հետազոտությունն իրականացվել է **երկու փուլով**:

Առաջին փուլում (2008-2010) իրականացվել է հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրում և դասակարգում: Սոց. հարցումների մշակումն առաջադրել է վարկածն ու հետազոտության խնդիրների ձևակերպումը:

Երկրորդ փուլում (2011-2013) իրականացվել են էմպիրիկ հետազոտությունները: Համակարգվել են ստացված տվյալները, կատարվել են հետազոտության տվյալների որակական ու քանակական մշակում, վերլուծություն, ձևակերպվել են եզրակացությունները, անցկացվել հետազոտության արդյունքների ձևավորում ատենախոսության ձևով:

Հետազոտության գիտական նորոյթը`

- որպես անձի սոցիալականացման գործոնի և ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանի նորոյի են բնութագրված երեխայի անձի ձևավորման ու զարգացման գործընթացի կառուցվածքային բաղադրիչները, ընտանիքի անդամների ներընտանեկան սոցիալական դերերը, դաստիարակության գլխավոր գործառույթները և ընտանեկան ավանդույթները:
- Բացահայտվել է արդի պայմաններում ընտանիքի դաստիարակչական ներուժը:
- Մեր կողմից մշակվել ու ներդրվել է «Ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանները» կադապար-մոդելը, որը ներկայացված է հետազոտության գիտական ենթադրության` վարկածի մեջ և ատենախոսության երկրորդ գլխի համապատասխան ենթազխում:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ

- Տեսականորեն հիմնավորվել են հետազոտության գիտատեսական և մեթոդաբանական հիմունքները, վերլուծվել և տեսական ընդհանրացման են ենթարկվել ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների հաստատմանը նպաստող գործոնները:
- Գիտականորեն հիմնավորվել են ընտանիքում արդյունավետ դաստիարակությունն ապահովող մեթոդների, միջոցների ու ձևերի համակարգը:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել է ընտանիքում արդյունավետ դաստիարակության մոդել, որը ներառում է դեռահասի սոցիալականացման գործընթացի արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները, միջոցներն ու ձևերը:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարելագործել ընտանիքում արդյունավետ դաստիարակության գործընթացը: Սրանք կարող են օգտագործվել ընտանիքում դաստիարակության գործընթացի կառավարման սուբյեկտների համար մանկավարժական գործնական հանձնարարականներ մշակելու գործում, ինչպես նաև կիրառել մանկավարժական թեմաներով թրեյնինգ-

ների կազմակերպման ժամանակ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովված է ատենախոսության գիտատեսական և մեթոդաբանական դիրքորոշումներով, հետազոտության ընդգրկումն բազայով, հետազոտությունների արդյունքների վիճակագրական վերլուծությամբ:

Հետազոտության արդյունքներն ու ներդրումը:

Հետազոտության արդյունքները ներկայացվել են հիմնախնդրի վերաբերյալ տպագրված հոդվածներում, քննարկվել են «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի մանկավարժության ամբիոնի ընդլայնված նիստերում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ **հայեցակարգային դրույթները**.

- Երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումներն անդրադառնում են հասարակության «առաջնային օղակի»՝ ընտանիքի վրա, առաջ քաշելով ընտանիքում երեխաների դաստիարակության մի շարք հիմնախնդիրներ, որոնք բխում են ընտանիքի դերային և գործառույթային վերածնվողուններից, պարտականությունների վերաբաշխումից, արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմաններից:
- Ընտանիքի դաստիարակչական ներուժը որոշվում է ծնողների ու երեխաների փոխադարձ գործունեությամբ, ընտանիքի կենսակերպը միասնականացնող մանկավարժական բնութագրով, նրա անդամների միջև միջանձնային հարաբերությունների և համատեղ գործունեության առանձնահատկություններով, որոնք իրենցից ներկայացնում են ծնողների և երեխաների փոխադարձաբար պայմանավորված գործողություններ, որոնք նպաստում են ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ստեղծմանը:
- Ընտանիքում երեխայի դաստիարակության գլխավոր օբյեկտն ընտանեկան միջավայրն է: Այդ միջավայրն է ապահովում նրա անդամների համար կեցության, զարգացման և առաջընթացի անհրաժեշտ պայմանները:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 148 էջի վրա, որն իր մեջ ընդգրկում է 7 աղյուսակներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ համապատասխան հիմնավորումներով ներկայացվում է հետազոտության **արդիականությունը**, տրվում են **նպատակն ու խնդիրները**, **գիտական ենթադրությունն** ու հետազոտության **մեթոդաբանական հիմքերը**, ձևակերպված են **օբյեկտն ու առարկան**, **գիտական նորույթը**, **տեսական**

և գործնական նշանակությունները, բացահայտված են հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը: Ներածությունում տեղ են գտել նաև հետազոտության անցկացման մեթոդները և փուլերը, փորձաքննությունն ու ատենախոսության կառուցվածքը: Ներածությունն ավարտվում է պաշտպանության ներկայացվող հայեցակարգային դրույթներով:

Ատենախոսության առաջին գլխում, որը վերնագրված է՝ «Երեխաների անձի ձևավորման ու զարգացման մանկավարժահոգեբանական պայմաններն ընտանիքում», քննարկվում են՝

- ընտանիքի բնութագիրը և գլխավոր գործառույթները,
- ծնողների և երեխաների փոխհարաբերությունների ոճերը և դրանց գործնական կիրառումը որպես ընտանիքում արդյունավետ դաստիարակության պայման,
- ներընտանեկան սոցիալական դերերը որպես երեխաների անձի ձևավորման և ընտանիքում արդյունավետ դաստիարակության բարձրացման հիմնական պայման:

Առաջին ենթագլխում խոսում ենք մարդկային խմբի և նրա առաջնային ու երկրորդային տեսակների մասին: Նշում ենք, որ

- **առաջնային են այն խմբերը**, որոնց անդամները մշտական անմիջական կապի մեջ են, տեսնում են իրար, մտքեր փոխանակում, հուզական վիճակներ ունենում,
- **երկրորդային են այն խմբերը**, որոնց միջև կապերը պաշտոնական են:

Նշում ենք և վերլուծում սոցիալական խմբերի տեսակները և որպես այդպիսիք առանձնացնում.

- **միջուկային ընտանիքը**, որը կազմված է ծնողներից ու զավակներից,
- **ընդլայնված ընտանիքը**, որի մեջ, բացի ծնողներից ու զավակներից, մտնում են ընտանիքի մյուս ավագ անդամներն ու այլ հարազատներ,
- **հավաք ընտանիքը**, որի անդամներն ապրում են միասին, որոշակի սահմանազատված տեղում, մեկ ծածկի տակ,
- **նահապետական ընտանիքը**, որտեղ ընդգրկված են մի քանի սերունդ՝ պապեր ու զավակներ, թոռներ ու ծոռներ:

Ներկայացնում ենք **ընտանիքի գործառույթները**՝ դրանք համարելով վերարտադրման, տնտեսավարման, դաստիարակչական, հաղորդակցման, ժամանցի կազմակերպման:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում վերլուծում ենք ծնողների ու երեխաների փոխհարաբերությունների ոճերը, տարբերակում ենք՝ «ավտորիտար» և «ժողովրդավարական» ոճերը: Դրանց զուգահեռ ներկայացնում ենք նաև «ազատական» կամ «լիբերալ» ոճերը, նշում, որ ավտորիտար ոճով ընտանիքը կառավարող ղեկավարը աչքի է ընկնում վարքի ու մտածողության կոպտությամբ, կոշտությամբ ու կարծրատիպությամբ, ձևանոլությամբ և պահպանողությամբ, շեշտված էթնոցենտրիզմով, հատուկ տեսակի ավտորիտար ագրեսիվությամբ: Այս

ոճը որդեգրած անձը հակված է միայնակ որոշումներ կայացնելու ընտանիքին վերաբերող խնդիրներ լուծելիս, հակված է ավելի շատ պատժել, քան խրախուսել:

Ներկայացնում ենք ժողովրդավարական ոճը, ցույց ենք տալիս, որ ոճն առաջ է եկել այն ժամանակ, երբ կինը սկսել է աշխատել և ամուսնուն հավասար ապրուստի միջոցներ հայթայթել: Վերլուծում ենք նաև **ազատական** կամ **լիբերալ**, երբեմն նաև չեզոք կոչվող ոճը: Վերլուծում ենք նաև ընտանիքում արդյունավետ դաստիարակության պայմանների ստեղծմանը նպաստող կամ անգամ խանգարող այլ ոճեր: Դրանք համարում ենք՝

- **Մոխրոտիկի ոճը**, որտեղ ծնողները չեն ցուցաբերում սիրո, քնքշանքի, ջերմության ոչ մի զգացում երեխայի նկատմամբ:
- **Գերխնամքի ոճը**, որտեղ ծնողներն ավելի ուշադիր են երեխաների նկատմամբ, կատարում են նրանց բոլոր ցանկությունները և քմահաճույքները, որոշումներ են ընդունում նրանց փոխարեն:
- **Տնային կուռք ոճը**, որտեղ բավարարվում են երեխաների բոլոր ցանկությունները:
- **Անտարբերության ոճը**, որտեղ երեխան զուրկ է ջերմությունից, քնքշանքից և սովորական առօրյա ուշադրությունից:
- **Վստահության ոճը**, որով ծնողները, ինքնավարություն տրամադրելով իրենց երեխաներին, նրանց դարձնում են ինքնուրույն և ազատ:

Ավելացնում ենք, որ ընտանիքում դաստիարակության ոճերի խնդիրը ոչ միայն կենտրոնական է մանկական հոգեբանության համար, կոչված է նպաստելու ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների հաստատմանը, այլև գործնական բոլոր խնդիրների լուծման բանալին է:

Գլխի երրորդ ենթազվիսում խոսում ենք «Ներընտանեկան սոցիալական դերերը որպես երեխաների անձի ձևավորման և ընտանիքում արդյունավետ դաստիարակության հիմնական պայմանի» մասին:

Եթե ուշադրությամբ դիտենք մարդու վարքը հասարակության մեջ, ապա կտեսնենք, որ նա տարբեր իրադրություններում տարբեր դերեր է կատարում՝ հանդես գալով որպես «դերասան», բայց այնպիսի դերասան, որը խաղում է հասարակական բեմերում, իրական կյանքի բեմի վրա: Փողոցում նա անցորդ է, դպրոցում՝ աշակերտ կամ ուսուցիչ, քաղաքացի, երթևեկության մեջ՝ ուղևոր, բանակում՝ զինվոր կամ հրամանատար, տարեկիցների շրջանում՝ ընկեր: Սրանք մարդու սոցիալական դիրքերն են: Այն հավասարապես տարածվում է նաև ընտանիքի վրա:

Ընտանիքի կայունությունը որոշվում է ներընտանեկան դերերի կատարման աստիճանով ու բնույթով: Ընտանիքի երկու կարևոր սուբյեկտները՝ ամուսինները իրենց համատեղ կյանքի ընթացքում անընդհատ պետք է լուծեն որոշակի հոգեբանական խնդիրներ, որոնք պայմանավորված կլինեն այն սոցիալական դերերով, որոնք նրանք կատարելու են ընտանիքում:

Ընտանիքում սոցիալական դերերը պայմանավորում են ծնողները՝ հայր-ամուսինը և մայր-կինը: Նրանք իրար նկատմամբ ամուսիններ են, իրենց զավակների նկատմամբ՝ հայր և մայր: Ընտանիքի հայրը գլխավոր դերակատարն է, որը ընտանիքը տնտեսապես ապահովողն է ու նրա պաշտպանը: Ընտանիքում խաղարկվող դերերի առանձնացումը, սակայն, ունի պայմանական բնույթ: Գրավելով որոշակի կարգավիճակ՝ անձը կատարում է մեկ միասնական դեր, իսկ լրացուցիչ կատարվածներն այդ միասնական դերի առանձին կողմերն են:

Մանրամասնորեն ներկայացնում ու վերլուծում ենք **Ներընտանեկան և միջ-ընտանեկան** դերերը: Նշում ենք, որ

- **Ներընտանեկան** են այն դերերը, որ ընտանիքի անդամներն ստանձնում ու կատարում են միայն ընտանիքի անդամների հետ փոխգործունեության մեջ մտնելիս: Դրանք են՝ ամուսնական դերերը, ծնողական դերերը, զավակների դերերը: Եվ զավակները մնում են այդ դերում, քանի դեռ նրանք սեփական ընտանիք չեն ստեղծել և նոր դերեր չեն ստանձնել:
- **Միջընտանեկան** են այն դերերը, որոնք կատարվում են ազգականների և ընտանիքի բարեկամների միջև:

Ենթազխում առանձնացրել ու վերլուծել ենք նաև սոցիալական դերերի այլ տեսակներ ևս: Դրանք համարել ենք.

- **պաշտոնական դերերը**, որոնք մարդիկ կատարում են իրենց գրաված պաշտոնական կարգավիճակներին համապատասխան, և
- **ոչ պաշտոնական կամ միջանձնային դերերը**, որոնք անձինք կատարում են ոչ պաշտոնական կարգավիճակներում :

Ատենախոսության **երկրորդ գլուխը** նվիրել ենք **հետազոտության գիտատեսական հիմնավորմանը և մեթոդաբանական նախադրյալներին**: Այն ներկայացրել ենք երեք՝ իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող ենթագլուխներում՝

- ընտանիքում արդյունավետ դաստիարակության կազմակերպման մանկավարժական պայմանների ձևավորման գիտատեսական հիմունքներն ու առանձնահատկությունները,
- ընտանեկան ավանդույթներն ու դրական սովորույթները որպես արդյունավետ դաստիարակության կազմակերպման մանկավարժական պայմանների ապահովման մեթոդաբանական նախադրյալներ,
- ընտանիքում երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը որպես արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ստեղծման մեթոդաբանական հիմք:

Ատենախոսության **երկրորդ գլխի առաջին ենթագլխում** ներկայացնում ենք **հետազոտության գիտատեսական հիմունքներն ու առանձնահատկությունները**: Նշվում է, որ շուկայական հարաբերությունների հաստատման և համաշխարհային զարգացումների ֆոնի վրա մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունները, հասարակական կենսագործունեության բոլոր

ուղորտների վերանայումը, դրանց նորովի իմաստավորումը պահանջում են վերակառուցել և կատարելագործել նաև ընտանիքում արդյունավետ դաստիարակությունն ապահովող պայմանները, ծնող-երեխա հարաբերությունները գիտական իմացության տեսության հիման վրա: Դրանց կյանքի կոչող բոլոր պատճառները, որոնք բնորոշ են նաև դաստիարակությանն ընտանիքում, պետք է ուսումնասիրվեն ոչ թե լոկալ, այլ գլոբալ համակարգային առումով:

Ներկայացված է ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ստեղծման համակարգը իր բաղադրամասերով՝ «բովանդակությամբ, կառուցվածքով ու առանձնահատկություններով», «ծնողների մանկավարժական գործիմացության վերլուծությամբ և ինքնավերլուծությամբ», «ընտանիքի անդամների փոխհարաբերությունների հաղորդակցման տեխնոլոգիաներով», «ընտանիքում արդյունավետ դաստիարակությունը ներկայացնող պահանջներով»:

Ցույց են տրված այն ներքին և արտաքին հակասությունները, որոնք կարող են առաջանալ ընտանիքում վերահսկողության գործընթացում:

Երկրորդ ենթագլխում խոսում ենք ընտանեկան ավանդույթների ու դրական սովորությունների մասին և դրանք ներկայացնում որպես ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ապահովման մեթոդաբանական մախաղայալներ:

Ցանկացած երկրում և ցանկացած ժողովրդի մոտ ընտանիքում դաստիարակության քաղաքականության ձևավորման հարցում առաջնային տեղը տրվում է մշակութային և կրոնական ավանդույթներին, հետո միայն ամեն երկրի նյութական, տեխնիկական ռեսուրսների զարգացման, հասարակության իրավական գիտակցության մակարդակին, այն բոլոր գաղափարական ու բարոյական արժեքներին, որոնք որոշում են այդ հասարակության զարգացման բնույթն ու ուղղությունը:

Այս հիմնավորումներով ամենայն մանրամասնությամբ ներկայացնում ենք ամենահայտնի և ամենից շատ ուսումնասիրված՝

- **«Չոռմեական ընտանիքը»** իր «մեկ տիրոջը պատկանող ստրուկների ամբողջությամբ, ոչ թե արյունակցական, այլ իրավական կապով, ամուսինների ոչ պարտադիր հավասարությամբ»:
- **Ամերիկյան ընտանիքը** իր եվրոպացիներով ու աֆրիկացիներով հարստացած ավանդույթներով ու ինքնատիպ սովորություններով, ընտանիքում երեխաների արհեստական արագ հասունացմամբ, ծնողների կողմից որոշակի սահմանափակումների լիարժեք բացակայությամբ, երեխաների ազատությամբ և ծնողների՝ երեխաների վրա թույլ իշխանությամբ:
- **Ֆրանսիական ընտանիքը** իր հիմնախնդիրներով՝ սակավ ամուսնությամբ, հաճախ ու բավական շատ ամուսնալուծմամբ, ծնելիության անկմամբ, ծերացող հասարակությամբ, «համատեղ կյանքը երկարատև է, իսկ կիրքը ժամանակավոր» սկզբունքով, կենցաղային հարցերում տղամարդու ան-

տարբերությամբ, երեխաների դաստիարակության հարցում կնոջ ակտիվությամբ:

- **Ճապոնական ընտանիքն** իր ինքնատիպությամբ, ավագ սերնդի մեծարման ու հարգանքի կանոններին հետևելով, սուբորդինացիայի զգացումով, որը երեխայի մեջ արմատավորվում է ոչ թե բարոյական դասերից, այլ սեփական փորձից, մանկուց եկող որոշակի արտոնություններին զուգահեռ՝ որոշակի պարտականությունների կատարումով:
- **Հայկական ընտանիքը** իր տեսակի մեջ յուրահատուկ ավանդույթներով ու սովորություններով՝ տղամարդու ավանդաբար ղեկավարող դերով, կնոջ առանձնահատկությամբ, տղամարդու՝ ընտանիքը նյութապես ապահովող գործառույթով, կնոջ՝ «օջախի պահապանի» դերով, երեխաների դաստիարակության և ընտանեկան մթնոլորտի ու յուրահատուկ միկրոկլիմայի ստեղծումով, երեխաների նկատմամբ գերխնամատարությամբ, կյանքի իսկական իմաստի պահանջմունքով:

Նշվում է այն կարևոր հանգամանքը, որ մանկավարժության և հոգեբանության տեսանկյունից ցանկացած ընտանիք դիտվում է որպես մի վայր, որտեղ՝ մարդը հանգստանում է լիարժեք և համապատասխան պայմանների առկայությամբ, ձևավորվում է որպես սոցիալական անձ:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում, որը վերնագրված է «**Ընտանիքում երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը որպես արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ստեղծման մեթոդաբանական հիմք**», նշվում է, որ «հոգեկանի զարգացումը որակական է և ոչ թե քանակական», որ «բացի տվյալ տարիքին հատուկ առանձնահատկություններից, երեխան ունի նաև իրենը՝ սեփականը», որ «հոգեկանի զարգացումը կախված է այն յուրահատուկ պայմաններից, որոնց մեջ գտնվում է երեխան», որ «անհատական առանձնահատկություններն էլ հաճախ ծածկում են տարիքայինը» և այլն: Այս մանրամասն շարադրում ենք կրտսեր, միջին (դեռահաս) և ավագ դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները շեշտելով, որ

- **Կրտսեր դպրոցականներն** ունեն կոնկրետ, կերպարային, առարկայական, անմիջական ըմբռնում և մտածողություն, որ նրանց մոտ ուսուցումը կառուցվում է ոչ թե վերացական բառերի ու պատկերացումների, այլ երեխայի կողմից անմիջականորեն ընկալված կոնկրետ մտապատկերների վրա, որ դաստիարակության արդյունավետությունը նրանց մոտ պայմանավորվում է դեպի ուսուցիչներն ունեցած իրենց հավատարմությամբ, հարգանքով և հեղինակության ճանաչմամբ և նրա օրինակի՝ երեխայի վրա ունեցած դաստիարակչական ներգործության անմիջականությամբ:
- **Միջին տարիքի կամ դեռահաս դպրոցականները** գտնվում են երեխայությունից դեպի հասունացում անցման տարիքում, որ դեռահասն իրեն դնում է մեծի տեղ և հաճախ պահանջում է, որ իր հետ վերաբերվեն որպես

մեծի, որ դեռահասությունն ինքնուրույն մտածողության, ինքնագիտակցության զարգացման տարիք է, որի ընթացքում որակական փոփոխություններ են կրում, զարգանում դեռահասի ուշադրությունը, զգացմունքները, երևակայությունը և հոգեկան մյուս հատկությունները, որոնք դառնում են կամաժին և օգնում ձեռք բերել վճռականություն, համարձակություն, ինքնուրույնություն, նախաձեռնություն:

- **Ավագ դպրոցականները կամ վաղ երիտասարդության տարիքի սովորողները** լի են հակասական բնավորություններով: Նրանք և՛ երեխա են, և՛ մեծ են, և՛ հասուն են, և՛ ձևավորված չեն: Այդ տարիքում նրանք ընդունակ են մտնել գիտական լուրջ գործունեության մեջ և ընկնել երեխայական հաճույքների հետևից: Նրանք հաճախ կատարում են այն, ինչ հակասում է մեծերի կարծիքին, և լուծում են իրենց ապագայի հետ կապված հարցերը: Ավագ դպրոցականը վճռական է, համարձակ՝ անգամ սխալի մեջ: Նա վերլուծում է երևույթները՝ հաշվի չառնելով, թե ով է ասողը՝ ծնո՞րը, թե՞ ուսուցիչը: Ավագ դպրոցական տարիքն օժտված է բնավորության յուրահատուկ գծերով, ունի ինքնուրույնության ձգտում և հասունության զգացում, իրեն մեծ պատկերացնելու միտում, անկախության հասնելու նպատակադրում, քննադատական մոտեցում ուրիշների և հատկապես ավագների նկատմամբ, շրջապատի թերությունները նկատելու և վեր հանելու կարողություն, հեղինակ տրամադրություն: Ավագ դպրոցականը մի շարք թերություններ է հանդես բերում նաև վարքում: Նա անկարգապահ է, որը սղամարդկության սխալ պատկերացման արդյունք է, անհամարձակ և խաբեբա, որը վախի կամ ամոթի զգացման արդյունք է: Բայց ավագ դպրոցականը ոչ միայն ճանաչում է աշխարհը, երևույթները, մարդկանց, այլև գնահատում է ճանաչվածը, վերլուծման ենթարկում այն, հանգում համապատասխան եզրակացության:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրել ենք «Ընտանիքում ծնողների կողմից թույլ տրվող դաստիարակչական վրիպումները, դրանց վերլուծություններն ու կանխարգելումը որպես ընտանիքում արդյունավետ դաստիարակությունն ապահովող պայման»:

Ուշադրությունը կենտրոնացրել ենք երկու կարևոր հարցերի վրա: Դրանք են՝ «դաստիարակչական վրիպումների առանձնացումն ու ախտորոշումը» և «հետազոտության մեթոդիկան ու հետազոտության արդյունքների ներդրումը»:

Առաջին հիմնախնդրի մեջ ներառել ենք՝ «Դաստիարակչական վրիպումները», «ծնողների կողմից երեխաների վրա ոչ ճիշտ ներգործությունների հետևանքները» և «ծնող-երեխա փոխհարաբերություններում թույլ տրված վրիպումները»: Կարևորում ենք ծնողների վերաբերմունքը երեխաների նկատմամբ, գտնում, որ դրանք կարող են լինել՝ «ծնողների կողմից երեխաների ընդունումն այնպիսին, ինչպիսին նրանք կան», «երեխաներին սիրելը այն հանգամանքներում, որոնցում նրանք կհամպատասխանեն իրենց սպասումներին ու պահանջներին» և «չընդու-

Ելել երեխաներին, անտաբերություն հանդես բերելը նրանց նկատմամբ»:

Մանրամասնում ենք այն փոխհարաբերությունները, որոնք կարող են ուղղել թույլ տրված սխալները կամ նորերը ծնել: Դրանք համարում ենք՝

- **թելադրանքը**, որի միջոցով ընտանիքի անդամների մի մասը ճնշում է մյուսների նախաձեռնողությունն ու արժանապատվության զգացումը,
- **խնամատարությունը**, որի միջոցով ծնողները բավարարում են երեխաների բոլոր պահանջները,
- **չմիջամտելը**, որի միջոցով ծնողները լուծում են երեխաների գոյատևման նպատակահարմարության հարցը,
- **համագործակցությունը**, որի միջոցով ծնողները հասնում են համատեղ գործունեության նպատակներին ու խնդիրներին, բարձր բարոյական արժեքներին:

Երկրորդ հիմնախնդրի հիմնավորման նպատակով ներկայացնում և մանրամասնությամբ վերլուծում ենք ծնողների կողմից երեխաների վրա ոչ ճիշտ ներգործությունների հետևանքով առաջացած վրիպումների տիպերը՝ դրանք համարելով՝ **«դաստիարակության և հուզական փոխհարաբերությունների», «դաստիարակության և արժեքային համակարգի», «դաստիարակության և ապագա նպատակների ձևավորման», «դաստիարակության և նրա միջոցով անձի ձևավորման», «դաստիարակության և մարդկային որակների ձևավորման»** պահանջումները: Շարադրում ենք այն պայմանները, որոնք, հաստատվելով ընտանիքում, կարող են ապահովել երեխայի անձի սոցիալականացումը, ձևավորումն ու զարգացումը:

Երրորդ հիմնախնդրի՝ «սոցիալական միջավայրի ազդեցության հետևանքով ծնող-երեխա փոխհարաբերություննրում թույլ տրված վրիպումները» երևույթի տակ ցույց ենք տալիս ծնողների կողմից դաստիարակության բացթողումների ուղղությունները՝ դրանք համարելով **«երեխաների նկատմամբ հանդգնությունը, գրգռվածությունը, համառությունը, տակտի բացակայությունը, կոպտությունը, պատանու կամ աղջկա ինքնասիրության ոտնահարումը, նրանց նկատմամբ սխալ կամ անարդար վերաբերմունքը, ծնողների բացասական օրինակը, երեխայի կամքի ոչ բավարար զարգացումը, մշակութային վարքին ընտելանալու կարողության պակասը»:** Ներկայացնում ենք նաև երեխայի վրա սոցիալական միջավայրի ազդեցության մեխանիզմները՝ «անմիջական ազդեցությունը» և «միջնորդավորված ազդեցությունը», որոնք իրենց մեջ ներառում են հասարակական և կենսաբանական գործոնները:

Երրորդ գլխի երկրորդ ենթազուխը նվիրել ենք մեր հիմնախնդրի վերաբերյալ սոց.հարցումների արդյունքների վերլուծությանը: Մեր առջև դրված խնդիրները լուծելու նպատակով նախաձեռնեցինք հետազոտություն ծնողների շրջանում, պարզելու վերջիններիս վերաբերմունքը ընտանիքում արդյունավետ դաստիարակության պայմանների ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ: Դրանք վերաբերվում են ծնողներին՝ **«ըստ ծնողների տարիքային դասա-**

կարգման», «ըստ ամուսնական կյանքի տևողության», «ըստ սեռի ու տարիքի», «ըստ ընտանիքի ամրության հիմքի և դաստիարակության առկա պայմանների», «ըստ դաստիարակության ոճերի»: Դրանք մանրամասնորեն վերլուծված են ատենախոսության մեջ և արտահայտված համապատասխան աղյուսակներում:

Ըստ սեռի և տարիքի

	մինչև 25 տ	25-50 տ	51-75 տ	Ընդամենը
Իգական	4	56	13	73
Արական	2	20	5	27
Ընդամենը	6	76	18	100

Ըստ սեռի ամուսնության տևողության

	մինչև 1 տ	2-5 տ	6-10 տ	11տ և ավելի	Ընդամենը
Իգական	4	6	9	54	73
Արական	1	5	5	16	27
Ընդամենը	5	11	14	70	100

Ըստ ընտանիքի ամրության հիմքի և դաստիարակության առկա պայմանների

Նո.	Օբյեկտ	Ընդամենը		Սեռ			
				արական		իգական	
		n	%	n	%	n	%
1	Ընտանիք	43	43	17	62.9	26	35.6
2	Դպրոց	1	1	1	3.7	0	0
3	Հասարակություն	1	1	0	0	1	1.4
4	Ընտանիք+դպրոց	6	6	0	0	6	8.2
5	Դպրոց+հասարակություն	0	0	0	0	0	0
6	Ընտանիք+դպրոց+հասարակություն	42	42	8	29.6	34	46.6
7	Ընտանիք+հասարակություն	7	7	1	3.7	6	8.2

Ըստ տարիքային դասակարգման

Նո	Չափանիշներ	Տարիքային խմբեր					
		17-25տ		26-50տ		51-75տ	
		n	%	n	%	n	%
1	Ընտանիք	5	83.3	35	46.1	3	16.7
2	Դպրոց (մանկապարտեզ)	0	0	1	1.3	0	0
3	Հասարակություն	0	0	1	1.3	0	0
4	Ընտանիք+դպրոց (մանկապարտեզ)	0	0	3	3.9	3	16.7
5	Դպրոց+հասարակություն	0	0	0	0	0	0
6	Ընտանիք+դպրոց+հասարակություն	0	0	31	40.8	11	61.1
7	Ընտանիք+հասարակություն	1	16.7	5	6.6	1	5.6
8	Ընդամենը	6	100	76	100	18	100

Ըստ ամուսնական կյանքի տևողության

Նո.	Հանգամանք	Ամուսնության տևողություն									
		մինչև 1 տ (n = 5)		2-5տ (n = 11)		6-10տ (n = 13)		11տ և ավելի (n = 71)		ընդամենը (n = 100)	
		n	%	n	%	n	%	n	%	n	%
1	Ի՞նչն էք համարում ձեր ընտանիքի ամրության հիմքը (կամ հակառակը) ա) սերը, հավատարմությունը, անկեղծությունը, հարգանքը բ) երեխաների առկայությունը գ) սովորությունը	-	-	-	-	-	-	-	-	-	-
		5	100	11	100	13	100	70	98.6	99	99
		1	20	5	45.5	7	53.8	38	53.5	51	51
		0	0	0	0	0	0	8	11.3	8	8
2	Ամուսինների միջև տարիքային որոշակի տարբերությունը ա) կինն է մեծ ամուսնուց բ) ամուսինն է մեծ կնոջից 15 և ավելի տարով	-	-	-	-	-	-	-	-	-	-
		0	0	0	0	0	0	2	2.8	2	2
		0	0	3	27.3	3	23.1	15	21.1	21	21
3	Մայր ընտանիքի (ամուսնու կամ կնոջ ընտանիք) հետ ձեր ունեցած բարեկամական կամ թշնամական կապը	1	20	3	27.3	2	15.4	14	19.7	20	20

4	Ընտանիքների տեսակները ա) ավանդական, բազմանդամ ընտանիք բ) միջուկային ընտանիք	-	-	-	-	-	-	-	-	-	-
	ա)	1	20	5	45.5	3	23.1	30	42.3	39	39
	բ)	1	20	2	18.2	3	23.1	4	5.6	10	10

Ըստ դաստիարակության ոճերի

Ոճ	Դաստիարակության ոճ	Ընդհանուր		Սեռ			
				արական (n = 27)		իգական (n = 73)	
		n	%	n	%	n	%
1	Դեմոկրատական ա) հաշվի են նստում զավակներիս կարծիքի հետ բ) նրանց աչքերով ու հայացքով են դիտում բնությանն ու հասարակությանը	-	-	-	-	-	-
		73	73	21	77.8	54	73.97
2	Ավտորիտար ա) հսկում են նրանց բոլոր արարքները բ) չեն թողնում, որ նրանք դուրս գան ինձ կարծիքից	-	-	-	-	-	-
		43	43	11	40.7	32	43.8
3	Լիբերալ ա) անտարբեր են նրանց արարքների նկատմամբ բ) ինչ ուզում են թող անեն, միևնույն է նրանց չեն փոխի	-	-	-	-	-	-
		5	5	2	7.4	3	4.1
		5	5	1	3.7	4	5.5

Սոցիալական հարցումների մեջ տեղ են գտել նաև այնպիսիք, որոնց միջոցով մենք պարզել ենք, թե ընտանիքում արդյունավետ դաստիարակության պայմաններից որին են նախապատվությունը տվել հարցման ենթարկված ծնողները.

- **Կենսաբանականի՞ն** (ծնողների տարիքային տարբերության, երեխաների տարիքի, հոգեբանության, սեռի և անհատականության հաշվառում):
- **Սոցիալականի՞ն** (ընտանիքում աշխատանքային ազատ ու անկաշկանդ մթնոլորտ, ընտանիքի ավագ անդամների վարչական, գիտական, հասարակական, քաղաքական, աշխատանքային և ծնողական պարտականությունների ներդաշնակում, երեխաների կրթվածության, դաստիարակվածության և ապագայի համար պատասխանատվություն, ընտանիքում դերերի բաժանում):
- **Բարոյականի՞ն** (ծնողների անձնական դրական օրինակ, ծնողների և ընտանիքի այլ ավագ անդամների օբյեկտիվ ու բարձր հեղինակություն):

- **Դաստիարակչականի՞ն** (ծնողների կողմից ընտանեկան կյանքի կազմակերպում, դպրոցի հանձնարարությունների ընդունում, հարգում և ընտանիքի կողմից անվերապահ կատարում, դաստիարակության միասնություն, ընտանեկան գործառույթներ, ընտանիքում դաստիարակության ձևեր, ընտանիքի անդամների և առաջին հերթին երեխաների ժամանցի կազակերպում):
- **Տնտեսականի՞ն** (նյութական, ֆինանսական միջոցներ):

Մանրամասն վերլուծություններն ատենախոսության երրորդ գլխի 3.2 ենթագլխում:

Ըստ ստացված տվյալների՝ ընտանիքում արդյունավետ դաստիարակությունը կապ ունի այն պայմանների հետ, որոնք կարող են նպաստել ընտանիքում մեծացող երեխայի անձի սոցիալականացմանը, որպես անհատականության ձևավորմանն ու զարգացմանը:

Աշխատանքի արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը մեզ հանգեցրին հետևյալ **եզրակացությունների**.

1. Հասարակության մեջ խորը սոցիալ-տնտեսական փոփոխությունները մեծ ազդեցություն են գործել ընտանիքի և նրա դաստիարակչական գործունեության վրա, ինչն էլ հրատապ է դարձնում ընտանիքում արդյունավետ դաստիարակության համապատասխան և ինքնատիպ մանկավարժական պայմանների ստեղծումը:
2. Ընտանիքում արդյունավետ դաստիարակությունը պայմանավորված է դաստիարակչական գործընթացներին երկու սերունդների՝ ծնողների ու զավակների և երկու սեռերի՝ տղաների և աղջիկների համագործակցությամբ:
3. Ոչ լիարժեք ընտանիքը միայն բացասական դաստիարակչական ազդեցություն կարող է ունենալ երեխաների անձը ձևավորելու վրա: Ծնողներից մեկի ֆիզիկական բացակայությունը, կամ երեխաների դաստիարակությանն անմասնակից լինելը բացասական են ազդում ընտանիքում երեխայի կրթվածության և դաստիարակվածության վրա:
4. Ընտանիքում երեխաների դաստիարակության վրա բացասաբար են ազդում.
 - ծնողների և երեխաների փոխհարաբերությունների սխալ ընտրված ոճերը,
 - ներընտանեկան սոցիալական դերերի սխալ գիտակցումը,
 - ընտանիքում դաստիարակության ընթացքում երեխաների տարիքի,

- հոգեբանության, սեռի և անհատականության հաշվառման անտեսումը,
- դաստիարակության ընթացքում ծնողների կողմից թույլ տրված առօրյա սխալները և երեխաների վրա միջավայրի բացասական ներգործությունները հաշվի չառնելը:
5. Ընտանիքում արդյունավետ դաստիարակության բարձրացման պայմաններ մեր կարծիքով պետք է համարել.
- ջերմ և բարեկամական փոխհարաբերություններն ընտանիքի անդամների՝ ծնողների, ծնողների և երեխաների, երեխաների միջև,
 - ծնողների բարձր և օբյեկտիվ հեղինակությունը,
 - աշխատանքային ազնիվ, ազատ ու անկաշկանդ մթնոլորտն ընտանիքում,
 - ընտանիքի ղեկավարների հասարակական-քաղաքական, տնտեսական, վարչական, գիտական և աշխատանքային պարտականությունների ներդաշնակ զուգակցումը ծնողական գործառույթների հետ,
 - ընտանիքում դաստիարակության ընթացքում երեխաների տարիքի, սեռի և անհատական առանձնահատկությունների հաշվառումը,
 - ընտանիքի կողմից դպրոցի հանձնարարությունների ընդունումը, հարգումը և անվերապահ կատարումը,
 - դաստիարակության միասնության հաստատումն ընտանիքի կողմից դպրոցի և սոցիալական միջավայրի հետ համատեղ աշխատանքում:
6. Ընտանիքում դաստիարակության մեջ ընդունելով ավտորիտար և լիբերալ-ազատական ոճերը, նախապատվությունը պետք է տալ ժողովրդավարական ոճին, որն ամբողջովին նպաստում է ընտանիքում անձի ձևավորմանը և զարգացմանը, ընտանիքում արդյունավետ դաստիարակության մանկավարժական պայմանների ստեղծմանը:

Չետագոտության հիմնական դրույթներն արտացոլվել են ատենախոսի հետևյալ աշխատություններում.

1. **Չարությունյան Լ.Մ.** Չայ ընտանիքի առանձնահատկությունների հաշվառումը, նպատակային կիրառումը որպես դաստիարակության արդյունավետության պայման: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2012թ., թիվ 7 (9), էջ 92-95:
2. **Չարությունյան Լ.Մ.**, Ընտանիքի անդամների առողջ, ազնիվ ու անկաշկանդ փոխհարաբերությունների ամրապնդումը որպես դաստիարակության արդյունավետության պայման: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2012թ., թիվ 10 (12), էջ 90-93:

3. **Չարությունյան Լ.Ս.**, Ընտանիքում ծնողների կողմից երեխաների վրա սխալ ներգործությունների հետևանքով առաջացած դաստիարակչական սխալները: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2012թ., թիվ 10 (12), էջ 94-99:
4. **Չարությունյան Լ.Ս.**, Ծնողների և երեխաների փոխհարաբերությունների ոճերը որպես ընտանեկան դաստիարակության ադյունավետության պայման: «Ակունք» ԵՊՀ-ԻՍ գիտական հոդվածների ժողովածու, հասարակական գիտություններ, 20012 թ., թիվ 3(6) , էջ 119-125:
5. **Չարությունյան Լ.Ս.**, Ներընտանեկան սոցիալական դերերն ու դրանց ազդեցությունը երեխայի սոցիալականացման և դաստիարակության վրա, «Մանկավարժական միտք» հանդես, 2014թ., թիվ 1-2, էջ 24-29:

АРУТЮНЯН ЛИАНА МИХАЙЛОВНА

**ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ОРГАНИЗАЦИИ ЭФФЕКТИВНОГО
ВОСПИТАНИЯ В СЕМЬЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 “теория и история педагогики”.

Защита диссертации состоится 31-ого октября 2014 г. в 14.00 на заседании специализированного совета “Педагогика” 065 ВАК РА по присуждению ученых степеней при Ереванском Государственном университете по адресу Ереван, ул. Х. Абовяна, 52а

Р Е З Ю М Е

Актуальность исследования: Семью нужно рассматривать как первичный фактор, влияющий на формирование и развитие личности ребенка. Важнейшая функция семьи – обеспечение социализации детей, создание условий эффективного воспитания в семье. Современная семья должна видеть свое предназначение в воспитании детей, наделенных нравственными, гуманными чертами, что можно обеспечить созданием педагогических условий эффективного воспитания в семье. Важнейшим условием эффективного воспитания в семье является вовлеченность членов семьи в решение семейных проблем, взаимодействие детей и родителей, планирование, осуществление и оценка результатов совместной деятельности.

Педагогические исследования и жизнь показывают, что возрастает влияние семьи на процесс формирования и социализации личности ребенка, что и обуславливает необходимость эффективного воспитания в семье и повышения уровня педагогических знаний родителей. Внутрисемейные взаимоотношения становятся причиной нестабильности эмоциональных отношений между родителями и детьми, между тем они являются теми предопределяющими факторами, которые необходимы для более эффективной организации процесса социализации подростка, передачи семейных, национальных ценностей, традиций. Их осуществление становится возможным исключительно созданием педагогических условий эффективного воспитания в семье.

Цель исследования: Роль эффективного воспитания в семье в процессе формирования и развития личности ребенка, исследование основных функций и создание соответствующих условий, обеспечивающих эффективность воспитания.

Задачи исследования:

- Анализировать современные подходы к вопросам педагогических условий воспитания, способствующих формированию и развитию личности ребенка;
- Анализировать стили взаимоотношений между родителями и детьми в современной семье;
- При помощи современных технологий выявить воспитательный потенциал современной армянской семьи, особенности семейного воспитания, выделить соответствующие функции, обосновать их роль в улучшении взаимоотношений между родителями и детьми, обосновать роль педагогических условий эффективного воспитания в семье в формировании и развитии личности ребенка.

Новизна научного исследования: В качестве фактора социализации личности и условия эффективного воспитания в семье по-новому охарактеризованы структурные компоненты процесса формирования и развития личности ребенка, внутрисемейные социальные роли, основные воспитательные функции и семейные традиции. Разработана и внедрена модель "Педагогические условия эффективного воспитания в семье".

Теоретическая значимость исследования: Теоретически обоснованы научные и методические основы исследования, анализирована и теоретически обобщена система методов, средств и форм, обеспечивающих эффективность воспитания в семье.

Практическая значимость исследования: Разработана модель эффективного воспитания в семье, которая включает в себя педагогические условия, средства и формы, обеспечивающие процесс социализации подростка. Результаты исследования дают возможность совершенствовать процесс воспитания в семье. Могут использоваться при обработке педагогических практических рекомендаций, во время организации тренингов на педагогические темы.

Структура и объем работы: Диссертация состоит из введения, 3-х глав, выводов, списка использованной литературы. Работа изложена на 148 компьютерных страницах, включающих 7 таблиц. По теме исследования опубликовано 5 статей.

LIANA HARUTYUNYAN

**PEDAGOGICAL CONDITIONS OF ORGANISATION OF EFFECTIVE
EDUCATION IN THE FAMILY**

Dissertation for the Degree of Candidate of Pedagogic Sciences in the field of
13.00.01 'Theory and History of Pedagogy'

The dissertation will be defended on 31 October 2014, at 14.00, during the session of an ad hoc Council "Pedagogy" 065 of the RA Higher Attestation Commission for the conferment of academic degrees at the Yerevan State University, located at 52a Abovyan St., Yerevan, RA.

SUMMARY

Relevance of the research: Family must be seen as a primary factor influencing the shaping and development of the child's personality. A major function of the family is to ensure the socialisation of children, to create conditions for effective family education. Modern families ought to consider the upbringing of children endowed with moral and humane characteristics to be their mission in life, and such education can be secured through the creation of pedagogical conditions for effective family education. An important condition for the effectiveness of family education is the involvement of family members in the solution of family problems, the interaction between parents and children, planning, implementation and evaluation of the outcomes of joint activity.

The pedagogic research and life show that the influence of the family on the process of formation and socialisation of the child's personality grows, which conditions the need for effective education in the family and for upgrading the pedagogic skills and knowledge of parents. Intra-family mutual relations become the cause of instability of emotional relations between parents and children, meanwhile those are the determining factors which are necessary for a more effective organisation of the process of socialisation of an adolescent, and the transference of family, national values, traditions, and culture. Their realisation becomes possible exclusively through the creation of conditions for effective family education.

The aim of the research: The role of family education in the process of formation and development of the child's personality, study of the main functions, and creation of corresponding conditions making for the effectiveness of childrearing.

Research tasks:

- Analyse contemporary approaches to the issues of pedagogical conditions of education, to the questions of improved effectiveness of family education in the process of formation and development of the child's personality;
- Study the styles of interactions between parents and children in modern families;
- Identify with the help of up-to-date technologies the educative potential of today's families, the peculiarities, specifics and functions of family education, and substantiate their role in the improvement of relations between parents and children, as well as the role of pedagogical conditions for effective family education and their impact on the formation and development of the child's personality.

Research novelty:

- As a factor of socialisation of the personality and a condition for the effectiveness of family education, the structural components of the process of formation and development of the child's personality, the intra-family social roles, the principal educational functions and family traditions are characterised in a new way.
- A model 'Pedagogical conditions for effective family education' has been elaborated and applied.

The theoretical value of the research:

The scientific and methodological bases of the research are theoretically validated; the system of methods, means and forms ensuring the effectiveness of family education is analysed and theoretically generalised.

The practical value of the research:

It lies in the elaborated model of family education, which comprises the pedagogical conditions, means and forms providing for the socialisation process of the adolescent. The results of the research make possible the improvement of the process of family education. Those can be utilised in the course of elaboration of practical pedagogical recommendations, and when organising trainings in pedagogy.

The structure and volume of the research work:

The dissertation consists of a preface, 3 chapters, conclusions, and a list of references. The work is expounded on 148 pages, including 7 tables.
5 articles were published on the subject.



